Կարգապահական գործ թիվ 16219

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի հուլիսի 13-ին թիվ 110-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/75-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագի Դանիելյանի (արտոնագիր՝ 425) (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

24.10.2016թ. Պալատում մուտքագրվել է Անահիտ Լոբյանի (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմումը, որի համաձայն՝ Անահիտ Լոբյանի և փաստաբան Վահագն Դանիելյանի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, Անահիտ Լոբյանի կողմից կատարվել է վճարում, սակայն Վահագն Դանիելյանի կողմից որևէ գործ չի արվել: Վահագն Դանիելյանը չի պատասխանում Անահիտ Լոբյանի զանգերին կամ ստում է:

Անահիտ Լոբյանի պնդմամբ, իրեն ոչինչ հայտնի չէ Վահագն Դանիելյանի կողմից կատարված գործի մասին, Դանիելյանն իրեն գործը ցույց չի տալիս, և երբ Անահիտ Լոբյանը փաստաբանին խնդրում է հայտնել գործի համարը, վերջինս պատասխանում է, որ չգիտի:

2. **Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 24.11.2016թ. թիվ 465-Ա/ԿԳ-16219 որոշմամբ Պատասխանողի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր

ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնվել է փաստաբան Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

13.07.2017թ. Դիմողը ներկայացրել է դիմում, որով հայտնել է, որ որևէ պահանջ կամ բողոք չունի Պատասխանողից, նա կատարել է բոլոր գործողությունները, և նրա աշխատանքների շնորհիվ 17.01.2017թ. պարտապան Գոհար Ադյանից ամբողջությամբ ստացել է պարտքի գումարը: Դիմողը նշել է նաև, որ հրաժարվում է իր կողմից ներկայացված դիմումի քննարկումից և խնդրում է կարգապահական վարույթը կարճել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

13.07.2017թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ Անահիտ Լոբյանին առաջարկել է վճարել 20.000 ՀՀ դրամ նախավճար, որի դիմաց ոչ միայն տրամադրել է բանավոր խորհրդատվություն, այլև կազմել է հայցադիմում և միջոցներ ձեռնարկել Գոհար Ադյանի պարտքի գումարը Անահիտ Լոբյանին վերադարձնելու համար: Անահիտ Լոբյանին գործի վերաբերյալ տեղեկություններ չտալու և զանգերին չպատասխանելու վերաբերյալ Պատասխանողը նշել է, որ այն չի համապատասխանում իրականությանը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 27.01.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը հաստատված է համարել, որ Անահիտ Լոբյանը դիմել է Վահագն Դանիելյանին և 02.11.2015թ. վերջինիս հետ կնքել փաստաբանական գործունեության պայմանագիր, որի

համաձայն Պատասխանողը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում պետք է հանդես գար որպես դիմողի, հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչ, ըստ Դիմողի հայցի ընդդեմ Գոհար Ադյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, իսկ Անահիտ Լոբյանը պարտավորվել է վճարել Պատասխանողին 40.000 ՀՀ դրամ: Նախապատրաստողը հատատված է համարել, որ Պատասխանողը վստահորդին կանոնավորապես, ժամանակին չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին, խուսափել է պատասխանել վերջինիս հեռախոսազանգերին և նրան հետաքրքրող հարցերին:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 30.01.2017 թ., Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017թ. հուլիսի 13-ին, ժամը 18:10-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.**

1. Փաստաբան Վահագն Դանիելյանը հանդիսանում է Անահիտ Լոբյանի փաստաբանը:
   Սույն փաստը հաստատվում է Անահիտ Լոբյանի դիմումով և Անահիտ Լոբյանի և Վահագն Դանեիլյանի միջև 02.11.2015թ. ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:
2. Փաստաբան Վահագն Դանիելյանը պարտավորվել է հօգուտ Դիմողի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում հանդես գալ որպես դիմողի, հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչ, ըստ Դիմողի հայցի ընդդեմ Գոհար Ադյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:
   Սույն փաստը հաստատվում է Անահիտ Լոբյանի և Վահագն Դանեիլյանի միջև 02.11.2015թ. ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:
3. Անահիտ Լոբյանը 17.01.2017թ. պարտապան Գոհար Ադյանից ամբողջությամբ ստացել է պարտքի գումարը՝ Պատասխանողի կողմից կատարված աշխատանքի արդյունքում:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Վահագն Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 15.04.2011թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 8 ավարտված կարգապահական վարույթ: 5 վարույթ կարճվել է: Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/51-Ա և 06.10.2016թ. թիվ ԿԳ/115-Ա որոշումներով Պատասխանողը ենթարկվել է կարգապահական տույժերի՝ համապատասխանաբար, նկատողության և խիստ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, որոնք մարվել են: Խորհրդի 15.12.2016թ. թիվ ԿԳ/194-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական տույժի՝ 100.000 ՀՀ դրամ տուգանքի Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, գտնում է, որ Պալատի նախագահի 24.11.2016թ. թիվ 465-Ա/ԿԳ-16219 որոշման հիման վրա Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի հատկանիշներով փաստաբան Վահագն Դանիեյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Դիմողի և Պատասխանողի միջև 02.11.2015թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ Պատասխանողը պարտավորվել է հօգուտ Դիմողի իրականացնել փաստաբանական գործունեություն, այն է՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում հանդես գալ որպես դիմողի, հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչ, ըստ Դիմողի հայցի ընդդեմ Գոհար Ադյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է նաև, որ Դիմողը 17.01.2017թ. պարտապան Գոհար Ադյանից ամբողջությամբ ստացել է պարտքի գումարը՝ Պատասխանողի կողմից կատարված աշխատանքի արդյունքում: Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողը 13.07.2017թ. հայտնել է, որ որևէ պահանջ կամ բողոք չունի Պատասխանողից:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանի կողմից թույլ չի տրվել Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի

կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 425) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16219 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան

13 հուլիսի 2018թ.
թիվ ԿԳ/75-Ա
ք. Երևան